ազգերնիս մէկ մը յանդիմանութենէ, մէկ մ'ալ 'ի մոռացութենէ՝ եկան 'ի գիտութիւն։ Առջինին դըրաւ նաև վերջի տարիներուս մէջ եղած ազգերնուս յառաջադիմութիւնը պատճառաւ ոմանց բարեսէր անձանց և խաղաղասէր ոգւոյ. վերջապէս զիրենք ալ իրենց օրինակ բերաւ, թէ ինչպէս աստնիկ խառնակ և խռովեալ ժամանակի մէջ հանդարտ և հլու կենալով՝ ուսմանց և բարի վարուց մէջ յառաջադիմեցին, որն որ անկարելի էր թէ որ սրտերնին խռովութեան մէջ ըլլար։ Ասկէ ցըցուց խռովութեան բրած չարիքները, և թէ որչափ կը վնասէ մարդկան, որ ինչուան անմահից կարգի անձինք գազաններու կը հաւասարեցընէ, և այլ գէշ՝ իրենց պատերազմներովը և ատելութե՛ գործքերով. որոնցմով բարգաւաճեալ աշխարհքս դարձեալ բարբարոսութեան դէմք կ'առնու. օգտակար գիւտեր չեն լըսուիր, գիտութիւնք կը դադրին, վաճառականութեան ճամբան կը փակուի, արուեստները կ'իյնան, հաղորդակցութիւնք կը խափանուին. ինչպէս որ կ'ըլլայ հիմայ ալ, և Աստուած տայ որ աւելին չըլլայ խռովութեանց երկըննալովը։ Ազգերնուս ալ հին ատեն շատ անգամ կըրթութեան մէջ ետ մնալը՝ դըրսի պատերազմներուն և ներքին խռովութիւններուն արդիւնքն ըլլալը՝ ցըցուց. և վերջի ատեններս ալ առաջ չերթալը՝ ընտանի հակառակութիւններէն առաջ գալը. և թէ այս վնասակար հոգին քանի որ տիրէ ազգիս մէջ՝ միշտ ետև պիտի մնայ Հայաստան. ընդհակառակն քանի որ միաբանութիւն, խաղաղասիրութիւն հաստատուի՝ այնչափ շատ և շուտ պիտի ծաղկի ազգերնիս։ Այս եզրի ապացոյցս է մեր մեծ իղձն ալ, որն որ բոլոր սրտով կը մաղթենք ազգերնուս, մանաւանդ աստնիկ շատ հարկաւոր ատեն մը։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՔՆԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ

Դ.

Տաղ սրբոց Վարդանանց։

Ի ՅԱՐԵՒԵԼԻՑ ծագեալ լոյս առաւօտու այսօր
 Ի լուսաւորել զաշխարհս, սուրբ վըկայքն արեամբն իւրեանց.
Որ վայելչապէս փառօք զինուք վառեցան հոգւով,
 Ի հանդիսական մարտին ձըգնեալ յաղթեցին չարին,
Եւ մեծի հովուին հօտից շառաւեղք գոլով սոքա,
 Եւ հետևելով ձըգանց և չարչարանաց նորուն,
Որ աւագանին լուսով որդիք վերըստին ծընեալք,
 Ի ձեռըն նախկին ընտրեալ սուրբ Լուսաւորչին Հայոց։
Ի Մամիկոնեան յազգէն քաջ ըսպարապետն Վարդան,
 Սա առնոյր ըզվըրէժս խաբմանն 'ի յանօրինաց դասուցն։
Մի ոմն 'ի գնդից սոցա յետս դարձուցանել կամէր
 Ի ճանապարհէն կենաց, որ և 'ի յերկինս առ տէր.
Եւ հայթայթանօք ջանայր զնենգ սրտին իւրոյ ծածկել,
 Կըրկնէր և երեքկընէր զսուտ երդումն խոստման իւրոյ.
Զի սուրբն 'ի տեսեանն ետես զնւացեալսն 'ի գոյն այծեաց,
 Եւ զգառինսն 'ի գայլ դարձեալ, որպէս ինձ թուի իսկ սա։

Սա ձախողակի գնացեալ գործակցօք չարին խաբմամբ,
Ի յամբարըշտաց ժողովն դաշինս հաստատէր երդմամբ։
«Բաջ գիտեմ, ասէ, յաղթել կարող էք իսկ դուք նոցա,
Զի զընտիր ընտիրսն և զքաջսն 'ի յիմ կողմն եմ դարձուցեալ»։
Իսկ անդրնդային վիշապն իբրև զայս լուաւ յառնէն,
Ի խոյզ 'ի խնդիր մտեալ քննէր և տեղեկանայր
Հաստատեալ ստուգէր յառնէն զմի մի առն ըզքաջութիւն,
Եւ ըստ խրատու նորա զզօրս իւր պատրաստէր 'ի մարտն։
Փողս հարին և կազմեցին պատրաստել զփիղսն յառաջ,
Եւ մի փիղ երիս հազարս սպառազէնս մարտկաց եդեալ.
Եւ վանդակակապ մարտկոցս մեքենաւորօք շինեալ
Ի վերայ փղացն կազմեալ իբրև զանառիկ ամուր։
Իսկ արդ զինչ արի վկայն և մեծ զինաւորն առնէր.
Զմի մի յընտրելոցն առ իւր կոչէր խրատելով զնոսա.
«Մի՛ զանգիտեսցուք, ասէ, յերկիւղէ մահու սրոյ,
Այլ քաջացարուք հոգւով, զի կարեմք յաղթել մարմնով»։
Որպէս և 'ի հնումն յայն ումն Եղիազար անուն
Այր մեծ 'ի գնդի իւրում, ըն աւուրբք ծեր հասակաւ
Ածեալ զայլ 'ի բերան նորա ստիպէին ուտել խոզենի.
Նորա իսկ 'ի մտի եդեալ յամառեալ պնդեալ սրտիւ
Յանձն առեալ ըզմահ ջանիւք քան զկեանս խղճիւ մտաց,
Ընտրեալ ինքնակամ զտանջանսն քան դոյզն անցանել ընդ օրէնսն։
Սոյնպէս և վկայս իսկ այս, լաւ համարեցաւ ըզմահ
Վասն ահի սաստիցն Տեառն, քան ըզխիղճ մտաց իւրոց։
Յերիս բաժանէր զիւր գունդն ընդդէմ կալ Արեաց գնդին,
Եւ զայլ այրուձին որ անդ՝ Թևս աստի անտի կազմէր.
Եւ գաղտնաբար դիմեալ 'ի միմեանս յարձակէին,
Հարեալ ուժգնակի զիրեարս կոտորմամբ սրոյ 'ի սպառ։
Արդ դարձեալ 'ի յետս նայէր քաջըն կորովին Վարդան,
Եւ զիւր կողմն ետես պարտեալ 'ի յանօրինաց գնդէն.
Ապա 'ի տեղին հասեալ 'ի յետս դարձուցեալ ընդ կրունկն
Եւ բերեալ ըզգազանօքն ածեալ կոտորէր զնոսա,
Եւ շըրջան առեալ 'ի յետս գայր մինչև 'ի նոյն տեղի,
Եւ անդ ոչ սակաւ նախճիրս գործէր մեծ վկայն և սուրբն.
Եւ ինքն զկատարումն առնոյր անդ սուրբ ընկերօքն իւրովք,
Վըկայ խաչելոյն եղեալ սրբազան գնդիւքն իւրովք։
Որ ըզհուր սիրոյ քո Տէր բորբոքեալ յոգիս սրբոյն,
Եւ հոգւով քո շիջուցին ըզբոց կռապաշտից Պարսիցն,
Որ զարդարեցեր փառօք զՀայաստան աշխարհս Քրիստոս,
Արա՛ արժանի ըզմեզ հետևիլ շաւղաց սոցա.
Սոցօք աղաչեմք ըզքեզ ներեա՛ յանցանաց մերոց,
Եւ խնդրուածօք սոցա ընկալ ըզպաղատանս մեր.
Եւ զվկայական արիւնն բարեխօս ունիմք առ քեզ,
Հաշտեա՛ 'նդ մեղուցեալքս այսօր 'ի ձեռըն վկայից քոց Տէր։
Եւ քեզ իսկ ընդ Հօր Հոգւով յաւէտ օրհնութիւն հանցուք
Որպէս վայելէ քեզ Տէր փառըք պատիւ յաւիտեանս. Ամէն։